



ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կէս տարեկան 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редація «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաւառներ և Թիֆլիս.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Սկզբունքի դիմակաւորված պաշտպաններ. Նա-
մակ Բագրեւոր. Նամակ խմբագրին. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ
Թիֆլիսի շրջանային. Նամակ խմբագրին. Ներքին լու-
րեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Նամակներ ընկերիս.

ԳԱՆԱՌՆԵՐ ԵՒ ԹԻՖԼԻՍ

Գաւառները միշտ նայում են Թիֆլիսի
վրա և նրանից, որպէս Անդրկովկասի մայ-
րաքաղաքի, օրինակ են առնում ինչ-
Թիֆլիսը լաւ բան է անում.—գաւառները
աշխատում են հետեւել նրա օրինակին, ե-
թէ անպիտան բան է անում Թիֆլիսը.—
գաւառները իրանց արդարացիում են ասե-
լով Թիֆլիսումն էլ այս կամ այն հաստա-
տութեան դրութիւնը աւելի լաւ չէ...

Մենք հիմնում ենք բարեգործական ըն-
կերութիւն.—գաւառներն էլ աշխատում
են ընկերութեան ճիւղերը իրանց մօտ
հիմնել. մենք հիմնում ենք օրիորդաց դպ-
րոցներ.—նոյնն են անում և գաւառական
քաղաքները. մենք ունենք լրագրութիւն.—
գաւառական քաղաքներում էլ մի ժամա-
նակ փորձ էին փորձում հիմնել գաւառա-
կան թերթեր. մեր յայտնած մանկավար-
չական սկզբունքները գաւառական քաղաք-
ներում աշխատում են իրաւորօրէն, և այլն:
Վերջապէս նոյն երեւոյթը նշմարվում է և
երկրի տնտեսական կեանքի վերաբերմամբ:
Թիֆլիսի քաղաքային վարչութեան այլ և
այլ կարգադրութիւնները արձագանք և
նմանողութիւն են գտնում գաւառներում,
և այլն:

Նոյնը կարելի է ասել և կեանքի բացա-
սական կողմերի մասին: Թիֆլիսում տեղի
ունեցող հասարակաց անմիջեմար երեւոյթ-
ները անմիջապէս հետեւողութիւն են գրե-
նում և մեր երկրի գաւառներում:

Արդէն վաղուց է, որ մեր զբերթէ ամեն
գաւառական քաղաքներից գանգատներ ենք
լսում թէ մեր եկեղեցական երեցիները
և դպրոցների հոգաբարձուները ուտում են
իրանց յանձնած եկեղեցական և դպրոցա-
կան փողերը և միշտ մեծքում են հաշիւ
տալ ժողովրդին իրանց ձեռքումն ունեցած
հասարակական փողերի մասին:

Եւ այժմ գաւառները աւելի էլ կը քա-
ջաւելան, տեսնելով որ Թիֆլիսը, պ. Գեորգ
Աբխազի անձնաւորութեան մէջ, այս

մօտ օրերս տուեց մի փայլուն օրինակ ժո-
ղովրդական անբռնաբարելի, օրինական ի-
րաւունքների այդ տեսակ կոպիտ խախտ-
ման...

Թիֆլիսի մի յայտնի և ամենահարուստ
հայոց եկեղեցու երեցիները ոչ թէ միայն
մերժում է ժողովրդին իր փողերի մասին
հաշիւ տալ և իր տեղը զիջանել ծուխից
ընտրված մի նոր երեցիներին, բայց և ան-
պատիժ է մնում իր այդ ապօրինի, հրե-
շաւոր վարմունքի համար ու մինչև ան-
գամ վարձատրվում է այդ անիրաւութեան
համար նորից հաստատվելով իր պաշտօնի
մէջ, ընդդէմ ժողովրդի, ընտրողների կամ
բնի, չը նայելով որ վեց տարի մնալով իր
պաշտօնի մէջ, ոչինչ հաշիւ տուած չէ
ժողովրդին իր ձեռքում եղած ահաբեկ
գումարների մասին:

Եւ այդ տեսակ հրեշաւոր, ապօրինի
վարմունքը պաշտպանութիւն է գտնում
մամուլի կողմից անգամ, և այդ մամուլի
թերթերից միտում նոյն իսկ Աբխազի
պաշտպան են հանդիսանում, ինքն հրա-
պարակախօս խմբագրապետը և մի իրա-
ւաբան...

Այդ անձոնութիւնը տեսնելով ինչի-
գաւառները նոյնը չանեն, մեր բոլոր գա-
ւառական երեցիներն ու հոգաբարձու-
ները չը քաջաւելան և չասեն. «բանի որ
Թիֆլիսի երեցիները հաշիւ չէ տալիս,
մենք ինչի հաշիւ տանք»:

Մեր եկեղեցական և դպրոցական կազ-
մակերպութիւնը, որ հիմնված է ընտրո-
ղական սկզբունքի վրա և ժողովրդի կօն-
քային է ներթափանցում.—որ և ճանաչել ու
վաւերացրել է ինքն պետական օրէնքը,
խախտվում է և մահաւոր հարուած է ըս-
տանում ազգի մտաւոր զեկավարների ձեռ-
քով: Անշուշտ Գեորգ Աբխազի, Գեորգ Ե-
ւանդուկան և Աբգար Յովհաննիսեան ի-
րանց փառաւոր էջը կունենան (թէ և բա-
ցասական մտքով) մեր ազգային-եկեղե-
ցական կազմակերպութեան օրինական կա-
ցութեան խախտման մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԿՁԻՈՒՔԻ ԴԻՄԱԿԱՆՈՐԱԾ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

Թիֆլիսի Գամայնից եկեղեցու երեցիներ պ. Ա-
բխազի հարցը շարունակում է աղմուկ հանել
Այդ ինքն ըստ ինքեան աննշան հարցը, որի վրա
արհամարհանքով կարելի էր նայել, այժմ ուշադ-

վերջ է վերջոյ դալիս, հասնում էինք մի կէտի, և
այդ ժամանակ այնքան մօտենում էինք միմեանց,
որ ես քո ասածները, իսկ դու իմն էիր կրկնում
Դու ոչնչով չէիր ընդդիմանում, երբ ես ուզում
էի հաւատացնել, որ հայ գրականութիւնը մեծ
խնամքի է կարօտ: Եւ այդ էլ ինչպէս մի արդէն
ուժեղացած, թե ու թիկունք առած պատմի,
որ առանց փորձառութեան, առանց հմուտ զե-
կավարի համարձակ քայլեր է անում դէպի ա-
ռաջ: Պատմիկն կամ շատ առաջ կերթայ, կը
զարգանայ գեղեցկաբար և իր բացառիկ բարդով
ապտակ կը տայ պատմութեան կարգ ու կանո-
նին, կամ թէ կը դիմէ դէպի կատարեալ ապա-
կանութիւն, դէպի կատարեալ թշուառութիւն:
Սա մեր մասնաւոր խօսակցութիւնն էր և ումի
ինչ, որ մենք մի այդպիսի, գուցէ հրէշաւոր հա-
մեմատութեամբ ենք ուզելով միմեանց հասկա-
ցնել, որ ամեն մի գրականութիւն, և մերը մաս-
նաւորապէս, առանց հիմնաւոր, խելօք քննադա-
տութեան միշտ պատահական բաղդի, միշտ բազ-
մադիմի կարելութեան ձեռքին կը մնայ խաղ և
կունենայ իր մէջ շատ ու շատ ցաւեր: Կարծեմ,
ես նոր բան չեմ ասում, կարծեմ, չի լինի մի
մարդ, որ ասէ թէ այդ այդպէս չէ: Մեզանում,

բոլորն են արժանացել, քանի որ այդ մասնա-
ւոր դէպքը շատ զաղտնի մնացած և վարագործի
տակ ծածկված բաներ է բաց անում:

Սակայն, պէտք է խոստովանենք, մեզ չէ հե-
տաքերում ոչ եկեղեցու հաշիւները, որի բեկոր-
ները պ. Աբխազի տպագրել է «Արձագանք» շա-
բաթականում, իր ձեռքով իր վրա զգված ա-
րատը մի փոքր արեւուն (?) համար, ոչ Գամայնից
եկեղեցու ծխականների և ժամաւորների ընտրու-
թեան կանոնաւոր կամ անկանոն լինելը, ոչ «Ար-
ձագանքի» մէջ տպագրած պաշտպանողական ա-
ռաջնորդողները, ոչ Սարգիս Բանասայ Բէշնազա-
րեանի սկսած արշաւանքի սկզբնապատճառները
և ոչ էլ այն խայտառակ լուրերը, որոնք պտը-
տում են մեր հասարակութեան գանգաւն շրջա-
նելու Գամայնից եկեղեցու փողերի ծախսելու
և այն ինտրիգաների մասին, որոնց մի ծայրը
գրած է Ներսիսեան դպրոցում, իսկ միւս ծայրը
շատ հեռու է գնացել...

Այստեղ կայ մի սկզբունքի հարց, որի առաջ
պէտք է խոստովանենք բոլոր միւս հարցերով խոզ-
վորդը հաշիւ է պահանջում երեցիներից, և ե-
րեցիները պարտաւոր է հաշիւ տալ.—ասա այն
հիմնական օրէնքը, որի դէմ որ և է ակնարկու-
թիւն անեն անգամ և ապօրինի, և դատաւարտելի
է: Բայց դարմանալին այն է, որ եկեղեցու վարչու-
թեան այդ ամենահամակրելի սկզբունքներին ընդ-
դիմադրում է մի մարդ, որը իրան համարում է
կրթված, ինտելիգենտ, և որը տանեակ տարի-
ներից ի վեր յաւակնութիւն է ունեցել հասա-
րակական գործիչ համարվելու Թիֆլիսի հայոց
հասարակական գործերի ասպարիզում: Կրթված
մարդ և հասարակական գործիչ համարվողի այդ-
պիսի վարմունքը հասկանալի է, որ ամենադաշ-
թակեցուցիչ օրինակ կարող է լինել ամենքի
համար: Եւ ճշմարիտ, պ. Աբխազի վարմունքը
արդէն եղաւ զայնթաղեցուցիչ օրինակ, ինչպէս
ցոյց են տալիս գաւառներից եկած լուրերը, որ
աղէտ և շահամոլ աղաները և վախառուները ա-
ւելի յանդգնութեամբ չեն էլ կամենում մտածել ի-
րանց երեցիներին հարուածելու հաշիւը
տալու մասին, չեն էլ ուզում մի րոպէ անգամ
ձեռքից թողնել երեցիներին բաւական շահաւէտ
պաշտօնը... Հաշիւ չը տալ ժողովրդին, չը հե-
ռանալ եկեղեցուց, դիմադրել ժողովրդին և խախ-
տել ընտրողական սկզբունքը.—ասա այն դատը,
որ տալիս է Ներսիսեան դպրոցից հոգաբարձու,
բարեգործական և ուրիշ ընկերութիւնների վար-
չութեան անգամ, հասարակական գործիչ և երեց-
իսի Աբխազի իր աղէտ պաշտօնակցներին, մի
նոր սխալման մտքնելով հայոց եկեղեցիներէ երեց-
իսի անհոգիութիւնը, որին կարելի է համարձակ չա-

քիմականութիւն» անունը տալ...

Սակայն այդ չէ բոլորը. Գամայնից եկեղե-
ցու երեցիների այդ հակակրկիտ վարմունքը, և
այդ «աքիմականութիւնը» դեռ գտնում է պաշտ-
պաններ ոչ թէ միայն Թիֆլիսի մի յայտնի
խմբին պատկանող անձանց մօտ մասնաւոր կեր-
պով, այլ նոյն իսկ հրապարակով, լրագրութեան
մէջ: Մարդիկ աղաւ են իրանց կարծիքը յայտնե-
լու, և «Արձագանք» շաբաթականը աղաւ է
այս կամ այն դատողութիւնը տալու հայոց եկե-
ղեցու վարչականութեան մասին, նա աղաւ է
գտնաբերելու հաշիւ տալուց հրաժարվող երեցի-
ներին, և զեղծունեւոր գտնելու հաշիւ պա-
հանջող ժողովրդի շատ պարզ վարմունքի մէջ:
Կրկնում, ենք ոչ որ չէ կարող ոյժով պահանջել
միւսից, որ նա աղնի, անկողնապահ և անձնա-
կան շահերի աստիճանից բարձր լինի.—սակայն
երբ այդ բոլորը քողարկում է մի ինչ որ ըս-
կալուածով, երբ ընտրողական սկզբունքը խախ-
տող երեցիները համարվում է անպատեւած ազ-
նիւ մարդ», վերջապէս երբ եկեղեցու ծխակա-
նները իրանց իրաւունքը պաշտպանողու համար
«բաղդալիսներ» անունն են ստանում.—ինչպէս
այդ անում է պ. Եւանդուկան «Արձագանքի»
մէջ տպած իր յօդուածում.—այդ դէպքում արդէն
լուրը ճշմարիտ որ անհերքելի է...

Եթէ «Մեղրու» նախկին աշխատակիցը հանդէս
գար միայն պ. Աբխազի անհոգիական պաշտպանելու հա-
մար, դրա վրա ոչ որ չէր դարմանայ. բայց զար-
մանալին այն է, որ երեցիներից հաշիւ պահանջե-
լու մէջ պ. Եւանդուկան տեսնում է ինչ որ
անբարոյականութիւն, սկզբունքի բացակայու-
թիւն, բաղդալիսների լարած թախարհներ, և
հասարակական գործերի վրա Թիֆլիսի մի
ինչ որ սխալման...

Պ. Եւանդուկան վրդովվել է. Թիֆլիսի հասա-
րակական գործերը և հիմնադրութիւնները տարի-
ներից ի վեր իրանց ձեռքի մէջ պահող խմբի
այդ հաւատարմութիւնը անգամ զայնքան է, որ Աբխ-
ազի անհոգիական անհոգիական անհոգիական
զուտ ենք նոր երեցիներ ընտրելու: Չենք հասկա-
նում թէ այդքան ինչ զայնքանաւոր բան կայ:
Ընդհակառակը, եթէ պ. Աբխազի դէմ մի կաթիլ
ինքնաճանաչութիւն ունենար, իսկոյն պէտք է
հաշիւները ներկայացնէր, իսկոյն պէտք է լուեցնէր
իր հակառակորդներին, և հեռանար ասպարիզից,
որպէս զի այդ նայն հակառակորդները՝ գուցէ յե-
տոյ խղճահարկէին, որպէս պէտք է ենթադրել պ.
Եւանդուկանի և «Արձագանքի» յօդուածներից:
Բայց ոչ, Աբխազի և ընկ. Եւանդուկանի է, որ
ստուգել են իրանց ձեռքում պահել այդպիսի

Երբ ենք փորձել մեզ վրա կամ մեր անցկացրած
թողածի վրա գիտակցական հայեացք ձգելու:
Մենք հօ մարդկութեան գերդաստանի մէջ առան-
ձին կազմուածք, առանձին ոյժ չունենք. մեր
կեանքն էլ ենթակալ է այն բոլոր դրութիւն-
ներին, որ իբրեւ օրէնք ասանքն է ընդհանուր
զարգացման պատմութիւնը: Արի թերթերը այդ
պատմութիւնը, միթէ նա այնքան զօրաւոր ձայն
չունի, որ առանց երկմտելու մեր երեսին բռնէ
այն երկաթէ տողերը, որոնք կարգում են, որ իւրա-
քանչիւր հասարակական գործ կենդանի է, դո-
ւրութեան բոլոր իրաւունքներն ունի այն ժամա-
նակ, երբ հիմնված է գիտակցութեան, փորձի,
խրատի վրա: Առանց այդ պայմանի գործը նման
կը լինի գործի ստուգելին, որ ինչպէս ամեն մի
ստուգել, երբեք է, անհաստատ, միշտ առարկայի
ետեւից կամ առջեւից վաղու, նրա կոյր ու թոյլ
պատկերացուցիչը, անգոյն, անհոտ, անշօշափելի,
զուրկ տաքութիւնից, խորութիւնից:

Ինչի է նման, ասա խնդրեմ: Մենք փրկում,
պարծենում ենք յիշելով և օտարներին յիշեցնել
տալով, որ երբեք, չորրորդ դարերում, միմեան
այժմեան քաղաքակրթ զգուշից շատերը վայրե-
նի էին, մենք ունէինք գրականութիւն, դպրո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԸՆԿԵՐԻՍ

Ա.

Քեզ հետ շատ էինք խօսում մեր գրականու-
թեան մասին: Անձնական փորձով հաւատում եմ,
որ դու գոնէ շատ չես մտաւորայ այն ոգևորված,
տաք խօսակցութիւնները, որ անում էինք, չը նա-
յած տեղին ու հանգամանքին. խօսում, վիճում
էինք բայց երկնքի տակ, ընտանեկան շրջանում,
խնջուկներում, մի խօսքով.—ամեն տեղ, ուր մեր
սրտին այնքան մօտիկ առարկան բաց էր անում
մեր բերանները: Յիշեմ ես, հարցը հարցի ետե-
ւից, պատասխանը պատասխանի ետեւից այնպէս
զալիս էին շարվում... Ի՞նչ էր ներշնչում, ումի
բերանն էր չորանում: Որքան և տարբեր լինէին
մեր հայեացքները, որքան և դու փախում էիր
համաձայնութեան կէտից, աւելի հակառակորդի
արժանաւորութիւնը պահելու համար, բայց մենք

պաշտօնները, տասնեակ տարի է, որ դրանք հաշվառում են բոլոր նոր մարդկանց, և այժմ էլ ուղևորված իրանց զորքը պաշտպաններին, ասում են ժողովրդին յանդգնություն՝ «մենք ձեզ չենք ծանաչում»։ Այդ մարդիկ զայրանում են, որ իրանց զորքերի վրա կոտորել են ուղևոր անել... և իրանց այդ վրդովված զորքերն մեջ մինչև անգամ սկսում են ճառել սկզբունքի, բարոյականության, և հասարակական արժանացող հեղինակությունների մասին։

Չենք հասկանում թե՛ քիչ խօսք կարող է լինել այստեղ սկզբունքի, բարոյականացող հետևանքների, անձնությունների և անշահամոլության մասին, երբ ամեն քան, նոյն իսկ ամենահիմնական սկզբունքները խոնարհվում են անձնությունների և անձնական դիտումների առաջ միայն... Դիմադրեցեք, որքան կամենաք, պարոններ, հասարակական արդարացի պահանջներին, խախտեցեք որքան կամենաք հասարակական գործունեության և եկեղեցու ընտրական սկզբունքները, թակարդներ լարեցեք, պաշտպանեցեք ձեր «եսը», բայց, ի սէր Աստուծոյ, մի խառնեք այդ բոլորի հետ սկզբունքը, բարոյականությունը և անձնությունները, որովհետև այդ բոլոր գործերի և սկզբունքի ու անձնությունների մեջ ոչինչ կապ, ոչինչ յարաբերություն չը կայ... Չեզ համար միայն անձնություններ կան, ձեզ համար սկզբունքներ չը կան... Այո, այդպիսի ողորմելի դրություն մեջ պ. Աբրահամ զուցէ էլի կարող է երեցվոյն մնալ, նա կարող է և հաշիւ չը տալ, այդպիսի դրություն մեջ պ. Մէլք-Վարդապետեան, ի հարկէ, կը հրաժարվի իր նոր պաշտօնից, բայց այդ դեռ ճշմարտությունը չէ. հասարակական կարծիքը արդէն իր վճիռը տուել է և արատը անջնջելի կը մնայ։

Պ. Եւանգելեան իր յիշեալ յօդուածը վերջացնում է բացականչելով. «չը գիտեմք, թե՛ այս թշուառ դրություն վերջը ճիշտեղ և քիչ կերպով վերջ պէտք է դնուի» (քիչ հայերէն է)։

Մենք կը պատասխանենք. դրան վերջ կը դնվի այն ժամանակ, երբ հասարակական ասպարիզի վրա փառաբանությունը և շահամոլությունը չի ծախվի սկզբունքի և անձնությունների փոխարէն, և երբ ժողովրդի աչքին այլ ևս անկարելի կը լինի թող փչել...

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մայիսի 11-ին

Ամսի 10-ին Շահգեղանեանի գործարանում պատահեց մի արտասովոր դժբաղդություն, որի մանրամասնությունները հետեւեալն են. Յիշեալ գործարանում կայ և ահագին թուփ ձուլարան. այդտեղ հայելու համար հարկաւորվում է ամենայն տեսակ թուփ անպէտք կտորտվածքէ Այդպէս, անցեալները գործարանը դնում է գործադուլի վրա. դուրս եկած հին թնդանութի մանր ու խոշոր ռուբերէ Այդպիսի ռուբերէ ռուս-թիւրքական պատերազմից մնացած, նոյն իսկ մինչև այժմ էլ գիւղացիք գտնում են հողի մէջ և բերում վաճառում են. ասում են դրանցից շատ

թիւն, որ քիչ յետոյ մտաւ ոսկեղարի շրջանը։ Այդ դեռ քիչ է, մենք աշխատում ենք հաստատել, որ Քրիստոսից էլ շատ առաջ, հեթանոս Յունաստանի հետ միասին, մենք ունէինք մայրենի լեզուով մենեական մատենագրութիւն, ունէինք մեր իրացաբանութիւններն ու իրացաբանութիւնները, որոնք ժողովրդական բանաստեղծների բերանով երգվում էին, սիրտ ու հոգի, ճաշակ ու քաղցրութիւն տալով հին աշխարհին. կարծում էլ ենք, որ կտոր-կտոր մեղ հասած երգերը խառնված էին մի գեղեցիկ ամբողջութեան մէջ։ Դեռ եթէ համարձակութիւն ունենանք էլ հեռու, էլ խոր գնալ հնութեան մէջ, մեր խեղճ ու միտքը տալով մեր մի քանի (ազգասէր) պատմաբանների ձեռքը, պիտի տեսնենք որ Նոյն հասարակ, Աղամ Նախահայրը մեր լեզուից խօսելի, ու գիտէ, զուցէ մի ուրիշ Զամեան մեղ համար այն գիւտն անէ, որ դրախտի հրեշտակներն էլ հայերէն լեզուով են երգել, փառաբանել իշխանը այդքան սարսափելի բարձրութիւնից դէպի ցած, ազգասիրական ու գիտական հնութիւններ միջով անցնելը դէպի իրականութիւնը, տեսնում ենք որ իսկապէս մեր գրականութիւնը դարձել է չափում իր հասակը, և

կայ Շուշի և Գանձակ, այդ պատճառով զգուշացնելը անելորդ չենք համարում։ Այդ ռուբերը գործարանում աւելի հեշտ հայելու համար առհասարակ կտորտում են։ Ահա այդ գործողութեան ենթարկվում է մի ռուբ՝ որը սակայն լի է լինում զանազան կտորակներով և վառօդով. բանւորներից մէկը երբ սեպը դնում է, և ահագին կտանը վրա բերում խփելու համար, յանկարծ դարձնելի որոտով հրանիւթը ճայթում է, և սարսափահար գործաւորների առաջ պաշարանում է մի տխուր տեսարան, ուր ընկած էին մարդկանց արիւնշաղախ դիակներ, զլիւ և մի կտորտանքներ. այդ ողորմելիների հեռաւոր ծնողների անդեղութեան համար աւելորդ չենք համարում հաղորդել դրանց անունները։

Սպանված է Հերեր գիւղացի երիտասարդ Սողոմոն Պողոսեանց։ Սարսափելի տանջանքների մէջ մեռաւ երեք ժամից յետոյ Նոր-Շէն գիւղացի Յակովբ Նալարպետեանց, սաստիկ վիրաւորված էր Զինաբազան գիւղացի Յարութիւն Աւագեանց, այդ պատճառով էլ միւս օրը բժիշկները կտրեցին աջ կուռը։

Հարան գիւղացի Միրզա Ռուստամեանի վերջը անվտանգ է և բժիշկները յոյս են տալիս։

Պողոս թուամեանց. 13—14 տարեկան, թէ՛ շատ ծանր վիրաւորված է ծնկներից, բայց յոյս կարելի է տածել նրա առողջութեան համար։

Քերթ գիւղացի Սարգիս Բալայեանց վիրաւորված է, բայց ոչինչ վտանգ չը կայ։ Նոյնպէս թիթէ կերպով վիրաւորված են Սիւրթ Վասիլեան բաղուցի, և մի քանի ուրիշներ։

Ռումբի բեկորները ընկել են ահագին հեռաւորութեան վրա. մի կտոր ընկելով երկաթուղու կայարանի կողմը՝ ձիառել է մի մարդու Շրջակայ յիւրութիւնների պատուհաններից շատերի ապակիները փչելով։ Են Չը նայելով, որ գործարանը քաղցր շատ հեռու է, բայց և այնպէս ճայթման ձայն լսելով, ահագին բաղմունքով կառքերով և ոտով խռնվել էր. գործարանը Պայթումը լսելի էր թէ Բաղուցում և թէ Ս քաղաքի բոլոր կողմերում։

Բացի թիթէ վիրաւորվածներից, միւս 4 հոգին բերվելով անյապաղ Միքայելեան հիւանդանոց ստացան բժշկական օգնութիւն, ուր և մինչ առողջանալը կը մնան գործարանատիրոջ հաշուով։ Նոյնպէս մեռածների թաղման բոլոր ծախսը հողաւուց յետոյ, պ. Շահգեղանեանց խոստացաւ նրանց ընտանիքներին միանուաղ նուիրել 500-ական բուրլի։ Պ. Զ. Լալայեանց նուիրեց իր կողմից 25 բուրլի։ Իսկ հայ բանւորների մէջ միտք յղացաւ, ձիառելների ընտանիքների օգտին մասն հանել իրանց ամսական ռոճիկներից։ Եթէ այդ վերջին բարի մտադրութիւնը իրագործվի, այդ կը լինի շատ միտքարարական։ Կոնից զրկվածի կեանքը ապահովացրեց պ. Շահգեղանեան, խոստանալով նրան ցմահ բաւարար թուփ։ Մի քանի այդպիսի լի ռուբերէ այսօր ծովը նետվեցան։ Այդպիսի անդուշտութիւնից և անհոգութիւնից առաջացած այդ դժբաղդութիւնը, ի հարկէ, աւելի քան ցաւալի է։

Ա. Ա.

Չարքանալեանը քեզ կասէ ամեն ինչ. բայց ես ուզում եմ որ դու չը մոռանաս վերեւ դրած հարցը. —ինչ է նման Այդքան երկար անցել է ունեցել մեր գրականութիւնը և ու է ճանաչում այդ անցեալը. ու է քննել նրան գրականական տեսակէտից։ Եւրօպացիները, Լանդուան, Դիւօրիէ, Գուլլոթիմ է այլն և այլն քննեցին մեր պատմագրութիւնները պատմական տեսակէտից, թիթէ կերպով քննելով գրականական կողմը։ Առարկութիւններ շատացան թէ մեր և թէ նրանց կողմից, շատ թէ քիչ լոյս սփռելով հնագոյն ժամանակների վրա. վիճաբանութիւնները կենտրոնացան պատմական ժամանակների առաջին շրջաններում. իսկ միւս, աւելի մօտիկ դարերին ոչ ոք ձեռք չը դարձրեց, ոչ ոք չը փորձեց մի ամփոփ արեւոյթութիւն կազմել, որի մէջ մենք տեսնէինք մեր գրականութեան չարժանի դարերի միջոյն։ Ինչ եմ ասում։ Մենք չը գիտենք, մոռացել ենք մեր և այնպիսի անցեալը, որ մեղանից հինգ, վեց, տասն տարով է հեռու։ Չը գիտենք թէ երբէն ենք արել և ինչ գաղափար ունենք արածներն վրա։ Մեր ժողովրդի լեզուի մէջ շատ է կրկնվում այն ոճը, թէ «երէկվայ կերած հացը միտս չէ»։ Սա մեր ազգային յատկանիշն է. գի-

ՆԱՄԱԿ ԻՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 12 մայիսի

Յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը բոլոր խմբագրութիւններին, քաղաքիս և գաւառական հայ հասարակութիւններին, զպրոցական և այլ հաստատութիւններին, ուսանողներին, ուսուցիչներին, աշակերտներին, հայ-մայրերին, հայ-օրիորդներին և այն բոլոր անձանց, որոնք արտայայտեցին իրանց անկեղծ և ջերմ ցաւակցութիւնը իմ հանգուցեալ ամուսին՝ Յակոբ Մէլք-Յակոբեանի (Բաֆֆի) մահվան առիթով։

Բացի սրանից պատիւ ունեմ խոնարհաբար խնդրելու, որ եթէ հանգուցեալ ամուսնուս, Բաֆֆի բարեկամներից կամ ծանօթներից մէկի մօտ գտնվէին հանգուցեալի որ և իցէ գիր, կամ ձեռագիր աշխատութիւն, անմիջապէս վերադարձնէին ինձ, եթէ, ի հարկէ, առանձին գրաւոր պայմանով կապված չեն եղել ամուսնուս հետ։

Աննա Մէլք-Յակոբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԻՐ

Մեզ ուղարկված է մի գրքի, «Մանուկ Արտաւազ» վերնագրով, տպագրված Շուշու հայոց հոգևոր տեսչութեան տպարանում, հեղինակութիւն Մ. Մուրադեանի։ Գա մի պատմական դրոյց է, որի բովանդակութեան մի քանի գլխաւոր կէտերը և գործող անձնաւորութիւնները վերցրած են հայոց պատմութիւնից, փաստոս Բիւզանդացու գրքից։ Վաչէ Մամիկոնեան նախաբար ունէր մի օրդի Արտաւազը անունով, որը, պատմագիր խօսքերին նայելով, արտասովոր քաջութեամբ, դեռ պատանի հասակում, մասնակցեց հայոց և պարսից պատերազմում, երբ հայերը Մամուկ Մամիկոնեանի առաջնորդութեամբ պատերազմի դաշտ դուրս եկան դիմադրելու պարսից զօրքին, որը ուրացեալ Մեհրուշահի առաջնորդութեամբ մտաւ Հայաստան՝ քրիստոնէութիւնը խորտակելու դիտաւորութեամբ։ Մամուկ Արտաւազը չը տեսնված արիւնքից ցոյց տուցեց, հուշակցեց, և դարձաւ հայ ժողովրդի համար մի դիւցազն։ Այդ պատմական հերոսն է ահա 45 երեսից բաղկացած գրքի լի բովանդակութիւնը, վէպի ձևով պատմված։ Գրքի հեղինակը լաւ ներք է ընտրել, դրանից կարելի էր մի գեղեցիկ պատմական դրոյց՝ դուրս բերել, բայց տարաբաղաբար հեղինակին այդ չէ աջողվել. հեղինակը մինչև անգամ վարակվել է պատմական աւանդութիւններով և առաւելակաւ կերպարանք է տուել գրքին, որի լեզուն, պէտք է ասել, բաւական հարթ աշխարհաբար է։

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետեւեալ. «Մայիսի 3-ին, երեքշաբթի օր, առաւօտեան 6 ժամին ու 45 րոպէին այստեղ զգալի եղաւ երկրաշարժի մի հարուած։ Քաղաքիս մի քանի մասերում հարուածը այնքան զգալի եղաւ, որ մի քանի տներում թէ հասակաւորները և թէ մանուկները զնած տեղից յանկարծ դարձեցան, անկողինների սաստիկ օրորվելու պատճառով, տների առաստաղները սուղող սկսեց տեղ տեղ թփուլել, իսկ բնաւ տներ այն, որ հաց կերել ենք, քաղցած չենք եղել. բայց ինչպէս ենք կերել, ինչ ճաշակով, — ահա դուրս պատուող հարց։ Կերել ենք աղի և անաղի կերակուր, համով և անհամ կերակուր։ Մեր ստամոքսը ոչինչ չէ մերժել. եղել է ժամանակ մարսել և հեշտութեամբ, զուարճութեամբ, բաւականութեամբ։ Բայց եղել է ժամանակ ունեցել ենք օձի ստամոքս, որ հազար ու մի չարչարանքով է կարողանում մի քանի օրվայ ընթացքում հազիւ հազ մարսել քաղցած ու կարօտ բերանի ներս դրկածը։

Ահա այսպէս ենք կատարել հանգուցեալ Նախաբանից կտակը. այսքան է եղել մեր խմբագրականութիւնը, մեր գիտակցութիւնը։

Բայց հիմա դու ասում ես, տես, տես, ուզում է ըննադատ դառնալ, ուզում է այդ ահագին զատարկութիւնը լցնել և այլն։ Հեռու ես, բարեկամ, շատ հեռու, ես ամենինի այդպիսի կարծիք կազմել տալու համար չեմ գրել նամակաւ Նախ և առաջ ամեն մարդ պէտք է իր չափն ու աստիճանը ճանաչէ. այսպէս են խրատել մեղ մեր հին պատանւորը։ Երկրորդ՝ խեղճ հեմ, որ ըննադատ անուն վերցնեն և չաւատացած եմ, որ դու, իբրեւ մտերմ ընկեր, չես ուղի որ ես ամեն մի հայի

կիշներից ոմանք, որոնք արդէն վեր էին կացել ու թէ՛ էին խմում, ցնցովից բաժաններ ձեռքից վայր են գցում»։

ԱՌԱՂՔԱՒԱՔԻՑ մեզ գրում են, որ մայիսի 3-ին այդտեղի եկեղեցում կատարվեցաւ հոգեհանգիստ Մօսկվայում այս օրերս վախճանված հաւուստ Յովհաննէս Անանիայի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էր մեծ բաղմունքի և երկսեռ զպրոցների աշակերտները, իրանց ուսուցիչներով։ Քաջազնունի քահանայն իր քարոզի մէջ յիշեց, որ հանգուցեալը վաթսուական թականներէից սկսած մինչև այսօր՝ շարունակ նուիրում էր Ախալքալաքի աղքատ ուսումնարաններին տաւական 150 բուրլի և վերջին ժամանակներս հրաւայել է, որ իր մահվանից յետոյ նոյն գումարը շարունակ տրվի իւրաքանչիւր տարի Թիֆլիսի իր ունեցած քարվանսարայի եկամուտից, որով պահպանվում է Թիֆլիսում հանգուցեալի ծախսով կառուցված Անանեան իգական դպրոցը։

Բացի Թիֆլիսի ուսուցիչներից, մենք այս օրերս տեսանք հանգուցեալ Բաֆֆի մասին կարճ կենսագրութիւններ և Ռուսաստանի մի քանի այլ լրագիրներում, օրինակ մայրաքաղաքի «Новости» լրագրում, Բոսնովում հրատարակող «Донск. Печела» թերթում և Ստաւրոպոլում լոյս տեսնող «Сѣверн. Кавказъ» լրագրում։

«Русский Курьеръ» լրագրի № 124-ի մէջ տպված է վերին աստիճանի ուղարկութեան արժանի մի թղթակցութիւն Կ. Պօլսից։

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՑԻՑ մեզ գրում են. «Թե՛ այստեղ և թէ՛ Ներքին-Արտաւազում կատարվեց Բաֆֆի հոգեհանգիստը փառաւոր կերպով։ Բայց կարծում ենք, որ Վերին-Արտաւազի հասարակութիւնը անպատճառ մի մշտական յիշատակ պէտք է թողնի Բաֆֆիի անուան համար մեր դպրոցում, ուր հանգուցեալը մի քանի տարի ուսուցչական պաշտօն է վարել։ Նշանակել նրա անունով մի որդեգիր տղայոց դպրոցում, և մի որդեգրուհի օրրորաց դպրոցում, — ահա թէ ինչով կարելի է գէթ մասամբ յարգել ուսուցիչ-վրպագրողի անունը»։

Մի հայ վարժուհի խնդրում է մեզ յայտնել, որ ցանկանում է դասեր ունենալ ընտանիքներում, թէ Թիֆլիսում և թէ գաւառներում։ Վարժուհու հասցէն իմանալ ցանկացողները կարող են դիմել մեր խմբագրութեան։

Մայիսի 3-ին Երևանում տեղի ունեցած երկրաշարժը, ինչպէս երևում է, զգալի է եղել ահագին տարածութեան վրա, այնպէս որ երկրաշարժի հարուածը մի և նոյն միջոցին զգալի է եղել համարեա ամբողջ Երևանեան նահանգում, սկսած Երևանից, անցնելով դէպի Նախիճևան, Զուղա և զուցէ աւելի հեռու։

Տիկին Նիկիֆորովայի գործը, որը մեղադրվում է Պէկարակուն սպանելու համար, արդէն յանձնված է դատարանին։ Մեղադրական ակտի մէջ տիկին

Թշնամին դառնում է այդ գործը զօրաւոր, կուշ անող է, ըննադատութիւն չէ վերցնում։ Փորձել ես երբ և իցէ առողջ դատողութեան ձայնը հասցնել հին պատաւի ականջին, երբ նա ողորկված պատմում է իբրեւ կենսական, անհրեղելի ճշմարտութիւն մի որ և է ցանցաւ առասպելի՝ Օ, ես շատ եմ փորձել Բարկացած և մի և նոյն ժամանակ կարեկցաբար, զորուած անկեղծ սէրից, նա կտրվում է լո՛ւ ձայնը. «որդի, մի ստիք, խեղճ ես, մեղք ես, կարմիր արև ունիս»։ Այսպէս մեր գործերը պատաւի առասպելից սկսած մինչև ամենաբարձր աստում են ըննադատութիւնը, ատելով ասում են. ամեն ղէպըս պատրաստ է փափուկ խրատը. «խնայիր քո կարմիր արևը»։

Թէ չափս ու աստիճանս ճանաչելով և թէ՛ Վարմիր արևա սիրելով, ես քեզ խնդրում եմ ճանաչել ինձ ինչպէս մի պարզ ընկերացող, որ շատ բան է կարողացել, լսել ու տեսել չար ու կարմիր Այդ տեսակ չափի միջոց կը գրեմ քեզ նամակներ ընդունի ինչպէս ուզում ես. չեմ էլ ուզում ասել, որ խօսքս կարող է և ծուռ լինել։ «Մարդ ենք»։

(Կը շարունակվի)

Հիկիֆորովա մեղադրուում է իր բնակարանում Պեկարովսկու սպանելու մեղքը և յաջողված դրուկեան ժամանակ ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագրիչները, այդ գործը պէտք է քննվի նահանգական դատարանում յաջորդ ամսի ընթացքում:

Մայիսի 12-ին, հինգշաբթի օր, կայացաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը, որին ներկայ էին բաւական թիւով անդամներ: Պ. Ստրուկէ կարգաց Գիւնինները կեդրեւում մասին» մի ղեկուցում Զեկուցանողը մանրամասնաբար խօսելով այն մասին թէ ինչ է նշանակում կեդրած գինի, և թէ գինիները կեդրած ինչ միջոցներ և եղանակներ կան, իր գեկուցման մէջ ընդհանրապէս այն միտքը յայտնեց, որ առհասարակ թիֆլիսում չը կան կեդրած գինիներ, և թէ շատ անգամ լրագրիչներին այդ մասին հաղորդած լուրերը անհիմն են: Վերջին կէտին վերաբերութեամբ ժողովականներին կողմից շատերը զարմանք յայտնեցին, նկատելով, որ կեդրած գինիներին գործածութիւնը արդէն սովորական է դարձել թիֆլիսում: Պ. Ստրուկէ յայտնեց, որ ինքը դեռ էլ մի գեկուցում պէտք է կարդայ այդ նոյն հարցի մասին, և այդ յաջորդ գեկուցման մէջ կը հաղորդի ժողովին թիֆլիսի գինիներին հետեւեալը: Նոյն ժողովում պ. Լեֆիանկան կարգաց իր գեկուցման չարժանաւորութիւնը «Միախառն արդիւնաբերութեան մասին» և արծարծելով այն միտքը, որ Անդրկովկասի ծխախոտի արդիւնաբերութեան զարգացման գործը պահանջում է հիմնել օրինակելի պլանտացիաներ, կանոնաւոր պահեստներ, և այլն, յայտնեց, որ այդ հարցի մասին էլի մի գեկուցում ունի անելու, որի մէջ կը հաղորդի այն մի քանի միջոցները, որոնք կարող են նպաստել յիշեալ արդիւնաբերութեան առաջ գնալուն: Առանձին վիճակներում թիֆլիսի չեղանք, քանի որ ամբողջ գեկուցումը լեւելուց յետոյ միայն կարելի է խօսել նրա մէջ յայտնած այս կամ այն առաջարկութեան մասին:

Եթէ հաւատանք «Новое Обозрение» լրագրի հաղորդած լուրին, Երևանի նահանգական դատարանի նախկին պրօկուրօր Ֆրէյզանը, որը բաւական հռչակ է ստացել իր ժամանակին, և որը այժմ պրօկուրօրի պաշտօն է վարում Վելիկոյուցկի նահանգական դատարանում, համաձայն իր խնդրի, գաւառապետի պաշտօն է ստանում Երևանեան նահանգում:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Մոսկովայի համալսարանի ուսանողները, ռուսաց կայսերական Աշխարհադարական ընկերութեան աշխատակից-անդամներ, պ. պ. Մարկով և Կովալեւսկի, ընկերակցութիւն կազմելով՝ մտադրվել են այս ամառը ճանապարհորդել դէպի Հայաստան, Գուրիա և Ալաւրիա՝ Նոր ցանկութիւն ունեն բարձրանալ Արարատի վրա:

ԱԽԱՆՈՒՄԻՅԻՑ մեղ գրում են: «Այժմ տեղում է այստեղ հացի և ուտելիքների թանկութիւնը, տաւարի մի ֆունտը արժէ 10 կօպ, իւղի ֆունտը 30 կօպ, այն էլ կծված: Աւելի ստորին տեսակը 1 ր. 50 կօպ:»

Ինչպէս մեղ հաղորդում են Ախալցխայից, այս օրերս բերքային այդ քաղաքը և ներկայացրին գաւառական բժշկին, Մուղրուք գիւղում ծնված երկու-գլխանի մի գաւառ:

Մեղ գրում են ԱԽԱՆՈՒՄԻՅԻՑ մայիսի 6-ից հետեւալը: «Ոհա երկու շաբաթ է որ շարունակ անձրևներ են գալիս մեղ մօտ Արդւն, բուսականութիւնը արթնացել է իր ձմեռային քնից, ծառերը ծաղկում են: Քաղաքս շատ անմաքուր է պահւում, այժմ անձրևների պատճառով ցեխը փողոցներում անբերական է, մանաւանդ Մարդա-Չայ կոչված գետակի երկու եզրերում:»

Մեղ գրում են ԿԱԶՈՒՄԻՅԻՑ մայիսի 9-ից հետեւալը: «Օրերումս կարճատև անձրևից յետոյ կայծակը խից մի 14 տարեկան աղջկան, որը և անմիջապէս մեռաւ: Իսկ միւս երեխաները, որոնք նրանից փոքր ինչ հեռու էին գտնվում, բաւական ժամանակ ուշաթափված մնացին:»

Հինգշաբթի, մայիսի 12-ին, Ֆորկատտի թատ-

րօնում ներկայացվեցաւ առաջին անգամ «Կապիտան Գրանտի օրերը» անունով ֆէլիանս: Ֆէլիանսի բովանդակութիւնը առնված է Ժիւլ-Վերնի յայտնի վիպասանութիւնից: Այս ֆէլիանսի մէջ աւելի զբաղաւորական տեղեր կան, քան զբանից առաջ ներկայացրած «Աշխարհիս շուրջը» 80 օրվայ մէջ: Ֆէլիանսում և աւելի լարված դերութեան մէջ է պահում հասարակութեան ուշքը: «Գրանտի օրերը» առաջին ֆէլիանսի նման բաւական չքեղ կերպով է ներկայացվում: Կան լաւ տեսարաններ և բեմի վրա ելող փոփոխութիւնները կատարվում են աղօղ կերպով:

«Новости» լրագրում կարդում ենք Լոնդոնից մայիսի 6/18-ից ուղարկված հետեւեալ հեռագիրը: «Այստեղ Փոքր-Ասիայի գործերի գրութիւնը համարում են շատ լարված:»

Զէյթունի հրկիզանքների օգտին կատարվող հանգանակութեան յանձնաժողովի գանձապահ պ. Կարապետ Մուրաֆեան ուղարկել է մեղ իննբերօրեց ցուցակը, որից երևում է որ այլ և այլ տեղերից հաւաքվել է դարձեալ 586 ր. 88 կօպէի: Գրա հետ միասին պ. Մուրաֆեան յայտնում է, որ այդ գումարից 504 րուբլին, որ ստացվել է Աստրախանի վիճակաւոր առաջնորդի միջոցով, նա փոխադրեց Կ. Օլիա, Պատրիկ Բէնդի Կիւպէն-կեանին, որին բացի զբանից անցեալ ամսի 30-ին փոխադրված է 3,000 րուբլի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՆԻՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Թիւրքաց Հայաստանում հայ հոգևորականութեան ներկայացուցիչները շարունակում են յուզմունքներ և գայթակղութեան պատճառ դառնալ նոյն իսկ այն ժամանակ, երբ այդ երկրի ազգաբնակչութիւնը առանց այդ էլ ծանր դրութեան մէջ է ընկել: Առաջ բերելու էլի մի օրինակ, որի մասին հաղորդում է Կ. Պոլսի «Արևելք» լրագիրը:

Իտալացի Ասորիներն հայ աղջիկ մը փախուցած էին, և Հայերն ամեն ջանք ի դործ կը դնէին ետ առնելու համար: Գնա. սակայն առաջնորդը, այն կողմի Ասորիներու մեծէն՝ Մ. Եփրեմէ, զաղանապէս հինգ ոսկի ստանալով, կը հրամայէ փախուցած աղջիկը պահել: Հանրապետի ստորագրողը ի վերջոյ Պատրիարք Զօր գրութիւնն և անմիջական տնօրինութիւն մը կը հայցին:»

Կ. Պոլսի ազգային քաղաքական ժողովը, Հաճնից և Պիլէճիկից եկած գրութիւններից տեղեկանալով որ այդ կողմերի ազգային սովոր պատճառով տառապում են և մինչև այժմ եղած տնօրինութիւնների բաւական չեն եղած դարման տանելու չարացի, պաշտօն յանձնեց Զէյթունի հրկիզեալ ազգային հաստատութեանց վերաբնութեան Գանձաժողովին՝ ձեռք առնել այժմ եղած միջոցները և կարգադրութիւնները և անմիջական օգնութեամբ նպաստ հասցնել նոյն կողմերի սովորաւ ազգայիններին:

Ինչպէս երևում է, ոչ թէ միայն Հայաստանի, այլ և Կ. Պոլսի հայոց զարգացման վարժապետների նիւթական դրութիւնը շատ աննախանձելի է. նոքա նոյն իսկ իրանց չնչին ռոճիկները անկանոն են ստանում: Այդ պատճառով յաճախ է պատահում, որ վարժապետները դիմում են Կ. Պոլսի ազգային վարչութեան, խնդրելով կարգադրութիւն անել իրանց ռոճիկների կանոնաւոր հատուցման վերաբերութեամբ: Այդպիսի հարցերի տնօրինութիւնը յանձնվում է ուսումնական խորհրդին, որի գործունէութիւնը, ինչպէս երևում է, այդպիսի դէպքերում, հրամաններ գրելուց հետո չէ դնում, հրամաններ, որոնք միայն մեռած տառ են մնում:

ՆԱՄԱԿ ԵՎ ԵՑՈՒՄԻՅԻՑ

Ժընէվ, 1 մայիսի

Եվեյցարայում Ժընէվի համալսարանը բնագիտական առարկաների բաժնով համարվում է ամենաառաջինը: Ուստի այն օտարականները, որոնք գալիս են Եվեյցարայի այդ մասնագիտութիւն ուսումնասիրելու, համարեա բոլոր յաճախում են Ժընէվի համալսարանը: Առհասարակ ուսանողներն այն առաւելութիւնն ունեն, որ կատարող են ազատ ունկնդիր լինել, որ բաժնում կա-

մենան, իսկ իսկական ուսանող լինելու համար մեղ—Ուսաստանից եկածներն—ընդունում են ևս բնական ուսումնարանի և օրիորդաց դիմադրի պատէստատով: Ներսիսեան դպրոցի վկայականը քիչ դժուարութեամբ են ընդունում, զըլ-խաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ նրանում քիմիա չը կայ: Զարմանալի է որ այդ առարկան, որը այժմ այնքան կարևոր է դարձել, մեր այդ դպրանոցում չէ աւանդվում (դոնէ մինչև այժմ իմ տեսած վկայականներում ոչ մէկում չը կար):»

Բոլոր առարկաները, այսինքն—գօլօգիա, համաժողովական անատոմիա, գէօլօգիա, պալէօնտօլօգիա, բուսական, քիմիա, ֆիզիկա և միներալօգիա դասախօսվում են երկու տարվայ ընթացքում, և այդ առարկաները միայն լսելու համար պէտք է վճարել 210 ֆր.: Այդ դուամբը համա-մատաբար շատ է, և դարմանալի չէ, որ այդքան թանկ են վերցնում, որովհետև այստեղ ուսանողները կազմված է առհասարակ հարուստների որդիներից:

Պրօֆեսորների դասախօսութիւնների լսելը պարտաւորեցուցիչ չէ ուսանողի համար, այնպէս որ միայն լաւ դասախօսներն են ունենում բազմաթիւ ունկնդիրներ և դրանով վատերն ասպարէզից հեռանում են: Դասախօսներից յայտնի են Կարլ Ֆօլտ, Էմիլ Խնդ, Գրէքէ և այլն: Վերջինս յայտնի գերմանացի քիմիկոսն է, որի ներկերի գիտն այնքան զննանք Կովկասի տորոնի արդիւնաբերութեան:

Փիլիսոփայ-բնագիտ Կարլ Ֆօլտ համալսարանային հռչակ է ստացել իր դրուածներով ու գիտնորով: «Ֆիլիսոփայական նամակներ» (Les lettres physiologiques) հեղինակը յայտնի է ևս ուստաց հասարակութեան: Սա էլ գերմանացի է: Գիտ ուսանող նա ստիպված էր թողնել իր հայրենիքը, ինչպէս քաղաքական յանցաւոր, և Եվեյցարայում շարունակել իր ուսումը: 35 տարի նա դասախօսում է ժընէվի համալսարանում գօլօգիա, համաժողովական անատոմիա, գէօլօգիա և պալէօնտօլօգիա: Նրա դասախօսութեան ժամանակ դահլիճը լի է լինում ունկնդիրներով: Նա այն յատկութիւնն ունի, որ կարողանում է հետաքրքրել լսողներին, որքան էլ որ դասախօսութեան նիւթը ձանձրալի լինի. խօսելու ժամանակ նա ոգևորվում է, և իմանում է գրաւել լսողներին: Չը մոռանանք յիշելու, որ նա բաւական զուարճախօս է:

Բացի դասախօսութիւններից ծերունի գիտնականը (անցեալ ամառը այստեղի համալսարանում կատարեցին նրա 70 ամնայ յօբելեանը) առաւօտից մինչև երեկոյ աշխատում է իր լաբօրատօրիայում: Բազմաթիւ տարիների աշխատանքի արդիւնքն ի վիճի այլոց է նրա և Էմիլ Խնդի մի հեղինակութիւնը—«Traité d'Anatomie comparée pratique», որի առաջին հատորն արդէն լոյս է տեսել: Այդ ձեռնարկն այն առաւելութիւնն ունի, որ հեղինակները չեն բաւականացել միայն լոյս տեսած գրութեանը, այլ իրանք ևս շատ տարիների ընթացքում հետազօտել են զանազան կենդանիների կազմակերպութիւնը, և իրանց աշխատանքի համեմատ հեղինակել զիրքէ իսկ այն կենդանիները հետազօտելու համար, որոնք գտնվում են միայն ուրիշ երկրներում կամ ջրերում, և որոնց տեղափոխելը անհնարին է, ինքն պ. Ֆօլտը այցելել է այն երկրները, ահադին գումարներ ծախսելով, իր աշխատանքի համար նիւթեր մատակարարելու:

Պրօֆեսորի լաբօրատօրիային կից կան ևս ուսանողների լաբօրատօրիաներ, որտեղ նրանք դիւէկցիա են անում զանազան կենդանիների, սկսած ամենահասարակ անողմաւոր կենդանիներից մինչև բարդ ողմաւորները, բացի մարդուց, որի համար առանձին լաբօրատօրիա կայ բժշկական ֆակուլտէտում: Բացի համեմատական անատոմիայի՝ կան ևս ֆիզիկայի, քիմիայի և բուսական կայի լաբօրատօրիաներ: Այս լաբօրատօրիաներից որ և է մէկում մի տարվայ աշխատել իսկական ուսանողի համար պարտաւորեցուցիչ է, որի համար պէտք է վճարել բաւական մեծ գումար (Անատոմ. 108 ֆր., Գիմ. 130 ֆ.):

Գէօլօգիայից և բուսականից դասախօսում են առհասարակ ամառվայ սեմեստրում, մի և նոյն ժամանակ լինում են պրօֆեսորների աշակցութեամբ էկսկուրսիաներ շաբաթը երկու անգամ: Այդ ճանապարհորդութիւնների ժամանակ ուսանողները գործնականապէս ծանօթանում են շրջակայ լոյսերի, ծաղիկների, քարերի, հանքերի, զանա-

զան շերտերի և բնութեան ֆենօմենների հետ: Վաբօրատօրիաներում և էկսկուրսիաների ժամանակ ուսանողը առիթ է ունենում պրօֆեսորի ասածն աչքով տեսնել, ձեռքով չօպիրել: Նա դրանով սովորում է չը բաւականանալ միայն լսածով ու կարգացածով, այլ անձամբ հետազօտել և տեսականը գործնականի հետ միացնել:

Այդ աշխատանքները մեղ համար նոր են նրա համար, որ մենք առհասարակ սովոր ենք չոր ու ցամաք դասախօսութիւններին: Սովորում ենք բուսական, գօլօգիա, իսկ մեղ չըբնագիտ—մեր երկրի—Ֆլորան ու ֆաունան մնում են մեղ անյայտ և անըմբռներին: Իսկ ինչ վերաբերում է մեր երկրի գէօլօգիային և միներալօգիային—դրանք մեղ համար terra incognita են:

Գէօլօգիայից պ. Ֆօլտ ունի զանազան գիտնոր ու դրուածներ, նա շատ է ճանապարհորդել թէ հիւսիսում, թէ հարաւում, բնութեան ֆէնօմեններն ուսումնասիրելու համար:

Գժաղաքաւոր այդ գիտնականը, որ այնքան մեծ ծառայութիւն է արել գիտնական աշխարհին, դէմ է կանանց բարձր ուսման: Նա այս վերջին ժամանակներում մի անհամակրելի յօդուած է գրել Վիենայի «Wiener Mode» թերթում «Ուսանողուհիներ» վերնագրով, որտեղ յարգելի գիտնականը անհիմաւաբար յարձակվում է ուսանողուհիների վրա, դատապարտելով նրանց՝ գիտութիւններ սովորելու կամ ուսումնասիրելու անընդունակութեան համար, այն ինչ, մենք ուսանողներս, նրանց հետ միասին աշխատողներս, հակառակն ենք տեսնում:

Այդպիսով երևելի գիտնականը իր անձնաւորութեամբ ապացուցանում է իր յայտնած այն ճշմարիտ միտքը, թէ՛ «մարդս դեռ հեռու է կատարելագործված էակ լինելուց»

Ք. Օ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրիդրիխ Կայսրի առողջութեան մէջ վերջին ժամանակները արդէն չօպիրելի փոփոխութիւն եղաւ: Դէպի լաւ: Բայց և այնպէս թէ նրան չըբնագիտները և թէ առհասարակ ժողովուրդը շատ քիչ յոյս ունեն կայսրի երկարակեցութեան վրա, և ենթադրում են որ աշնան վրա հասնելը վտանգի մէջ կը դնէ Ֆրիդրիխի կեանքը:

—Հեռագիրը արդէն մեղ հաղորդեց Վիենայից Մարիա-Թերեզայի արձանի բացումը: Վիենայի լրագրիչների վերջին համարները համարեա ամբողջապէս նուիրված են այդ արձանի բացմանը և Մարիա-Թերեզայի անձնաւորութեանը, որը յիշաւ մեծ դեր կատարեց աւստրիական միութեան գործում:

—Եվեյցարական դանակակաւ խորհուրդը այժմ զբաղված է քաղաքական ոստիկանութեան վերականգնութեան հարցով, որին ուղղում են տալ աւելի գործնական կազմակերպութիւն: Այդ վերականգնութեան գլխաւոր նպատակն է սերտ յարաբերութիւն մտցնել զանազան կանտոնների ոստիկանութիւնների մէջ, որպէս զի կարելի լինի իրական հսկողութիւն նշանակել օտարերկրացի լրտեսների վրա, որոնք մեծ քանակութեամբ գտնվում են Եվեյցարայում: Այդ նոր օրինադրի առաջ գալու գլխաւոր պատճառներից մէկը, ինչպէս զգուշար էլ չէ հասկանալ, վերջին ժամանակներս այդ լրտեսների վերաբերութեամբ Գերմանիայի հետ տեսեցած տարաձայնութիւնը կարելի է համարել: Գերմանիայում առանձին ուշադրութեամբ հետեւում են այդ ոստիկանական վերականգնութեան գործին, որը սկսված է Եվեյցարական լրագրից:

—Փարիզից հեռագրում են հետեւեալ տարօրինակ լուրը. «Գինեւրալ Բուլանտէ Ֆրանսիայի համար իր բնակարանում հիմնել է մասնաւոր կառավարութեան նման մի բան, որը բաղկացած է երեք բաժնից՝ այն է արդարադատութեան, ներքին գործերի և ղիւնուրական վարչութիւններից:» Եթէ Բուլանտէ իր բնակարանում մի գահ դնէր, և բազմէր այդ գահի վրա՝ զլսին թագ դրած,—այն ժամանակ անկասկած տալուրութիւնը կատարել կը լինէր:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի «Արևելք» լրագիրը իր վերջին համարներում սկսել է տպագրել Պոլսի կեանքից վերցրած մի վէպ՝ Վարժապետին աղջկը: Վերջնագրով թէ ինչպիսի վէպ է դա,—չնք կարող

ասել, որովհետև վեպի միայն մի փոքրիկ կտորն է տպագրված ինքը խմբագրությունը վեպի տպագրությունն ապագայում համարում է հետևյալ թվով և անունով: «Վարժապետի անվան» Պոլսոյ հայկական բարձր ուսումնական դպրոցի միջին, արդեն չիրապաշտ դպրոցին: Հետևողականորեն գրում, որում ձեռնարկները միայն է Բանաստեղծության, իբրև Արևմտյան գեղարվեստի պայման: Հեղինակը գիտցած է իր վեպին մեջ ճարտարապետ միացնել շարժում և հոգեբանական հետազոտություն, առանց մի միայն դեպքում:

Խոստովանվում ենք, այդպիսի բեկնիքները հասկանալով առհասարակ շատ դժուար է լինում: Մեր պոետիկ զրականագետները կարող են ամենայն իրաւամբ պարծենալ, որ եթէ եւրոպական գրականությունը այժմ ստեղծել է չիրապաշտ դպրոց, իրանք էլ ստեղծել են մի ամբողջ չիրապաշտ դպրոց: Բառապաշտություն չէ, ապա ի՞նչ է այդ...

Անդրկական լրագրագետները հանգանակություն բացին, որպէս զի արձան կանգնեցնեն անդրկական լրագրագետի այն եօթ թղթակիցները համար, որոնք մեռան Նիկիտոսով և Սուրբանով: Մի միայն այդ եօթն հասկանալիներն կանգնեցրած արձանը պէտք է ներկայացնի պատերազմական ժամանակի թղթակցին, որը կուրի կատարի ժամանակ, գնումները կարգավոր տակ՝ արձանագրում է եղելությունը:

Սերգեյից դուրս են հետևողքը: «Անդրկական գիտնական» Լոմոնոսովի հանդիպեց մի օձի իր 18 ձուկների հետ: Երբ մայր-օձը տեսաւ մարդուն, ահալին շուտով բացաւ իր բերանը, և 18 ձուկերը արագությամբ մտան բերանը ու անհետացան կոկորդի մէջ: Լոմոնոսով սպանեց օձին, և անմիջապէս պատուելով նրան, բոլոր ձուկերին կենդանի դատաւ, որոնցից 13-ին սպանեց, իսկ մնացած հինգը կարողացան փախչել և պահպան խոր խոտերի մէջ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 մայիսի Այսօր արտակարգ զննչով Օդեսա ուղևորվեց Մեծ Խիսանուհի Ալեքսանդրա Եստֆոնովա, յունաց թագուհուն դիմաւորելու համար:

Իրիս, 11 մայիսի Այսօր, առաւօտեան մօտ 7 ժամին, (Օտտիլի) պարկում ձերբակալվեց նազվորների սովետների իմանով, որը յափշտակել է թիֆլիսի գանձարանից 313,000 ռուբլի:

ՓԱՐԻԶ, 11 մայիսի Արտատպական պատգամաւոր Լիւմանսո իր ընկերների հետ ժողով են գումարում դեպուտատներից, սենատորներից և քաղաքականներից, որի նպատակը պէտք է լինի միջոցներ որոնել պերիցիտի ազդեցությանը դիմադրելու համար: Չմոռնալին ցերեկում գումարվելու է ֆրանսիականների կոնգրէս, որը պէտք է ընկնէ

այն վտանգները, որոնք առաջ են գալիս պերիցիտի շնորհիվ: Բանագործները առաջարկում են վերադառնալ սահմանադրությունը՝ հանրապետությունը աւելի հաստատուն դարձնելու, և ոչ թէ միապետությունը վերականգնեցնելու համար:

Կ. ՊՈԼԻՍ, 11 մայիսի: Կոմս Սարգսյանով, իշխան և Խիսանուհի Շէքերաշովի, որոնց փոքր-Ասիայի ճանապարհորդության մասին յուզիչ լուրեր էին պտտում, այստեղ հասան իրանց նաւով:

ՍՏՐԱՍՔՈՐԴ, 11 մայիսի: Այն տաճարները, որի պատճառով, որոնք պատահել են գերմանացի Լիտուանների հետ՝ երբ նա անցնում էր ֆրանսիական սահմանը, էլզաս-Լոթարինգիայի իշխանությունը որոշել է անցադրերի պահանջները ի նշկատի ունենալ:

ԲԵՐԼԻՆ, 11 մայիսի: Հացահատիկների մաքուր շատացնելու հարցը յետաձգված է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 մայիսի: Ջինուրական վարչության տուած հրամանով, յայտնված է, որ Անդրկական շրջանի տեղական դորաթոնները դործող շատեր փոքրացվում է 13 օֆիցերով և 1,088 զինուորով:

ԱՅԵՆԻՔ, 12 մայիսի: Այսօր թագուհին ուղևորվեց Կորֆուից դէպի Օդեսա և Պոլսի վրայով:

ԲԵՐԼԻՆ, 12 մայիսի: Այսօր կատարվեց պրինց Հենրիխի և Խրիստա Հեսսենիան իշխանուհու ամուսնությունը:

ՓԱՐԻԶ, 12 մայիսի: Այստեղ երեսգին հինգ-հարիւր ֆրանկանոց կեղծ թղթադրամներ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 մայիսի: Երէկ գրեթէ բոլոր քանկային հիմնարկները յայտնեցին կլիենտներին, որ բարձրացնում են փոխառական օպերացիայի մէջ դիվիդենդային չափը մինչև 7 1/2% տարեկան: Պետական խորհրդին ներկայացրած է հաղորդակցութեան ճանապարհների և ֆինանսների միւնիստրությունների առաջարկությունը մեր հացի առևտուրը բարձրացնելու մասին: Գիտաւորություն կայ իրագործել ուսուցիչ բոլոր երկրորդներում կանոնաւոր փոխառություն հացի բեռների գրաւականով, պետական բանկի հաշիւով: «Гражданинъ» լսել է, որ գրվադիայի դորքերի և Պետերբուրգի զինուորական շրջանի զինուոր հրամանատարը յունիս և յուլիս ամիսներին կայցելէ Տուա քաղաքը, Սերգիևիան վաղը և միջին Ռուսաստանի այլ քաղաքները, որտեղ գորահանդէսներ կը կատարի: Ճանապարհորդութիւնը երեք շաբաթից աւելի չի տևի: Նոյն լրագիրը հաղորդում է, որ պետական կաւուանների միւնիստրը երէկ ներկայացրեց Բարձրագոյն Պալատը եօթ հատորից բաղկացած և նոր տպագրված գիրքը՝ միւնիստրությունների յիսունամիայն գոյություն մասին:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 20 մայիսի (1 յունիսի) ԲԱԹՈՒՄԻՅ զուրկ կը գնայ շողենաւ VOLGA (ՎՈԼԳԱ) նաւապետ DEVEZE (ԴԵՎԷԶ) մասնակով Կ. Պոլսի, Զմիռնիա և Սիբուս: Ազգեսները ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆԵԻ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՐԳ ԷՆՁՈՒԲԵԱՆ, ՀԵՆՁՈՒԲԵԱՆՑ: 1—2

ԴԵՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՆԵՐԻ ԵՒ ՄԵՐԵԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Միջին-Փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ՝ երևանեան հրապարակից), Նարիմանովի տանը ԲԱՑՎԱԾ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀԵՍ ԿԵՐՈՍԻՆՆԵՐ ՄԱՍ ՄԱՍ ԾԱԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերտները տարբերվում է իր յատկութեամբ թիֆլիսում մաս մաս ծախվող կերտներից: Նա հոտ չունի և կատարելապէս անվտանգ է:

ԳՆԵՐԸ ԶԱՓԱՌՈՐՈՒՄ ԵՒ ՀԱՄԵՄԱՏ ԲԱԳՈՒԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԳՆԵՐԻՆ:

Ծառաների կողմից խաբեւայութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ գալիս է կերտին առնելու, տրվում է մի ՄԱՐԿԱ „E. A. Патровъ. Керосинъ“ գրութեամբ:

Առաջին պահեստը. ՎՈՐՈՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՏ, Պալլովսկու բժշկարանի կողքին: Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերտին ստանալ առանձին գրքով և վճարել ամէն ամիս:

13—25 (Ե. Ե.)

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձութեան խորհրդարանում յունիս ամիս 1-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ԱՃՈՒՐԴ (առանց կրկնաճրդի) կապալով տալու 21 կրպակներ, որոնք գտնվում են դպրոցապատկան հրապարակի վրա վանքի եկեղեցու մօտ: Պայմանաթուղթը կարելի է կարգաւ հոգաբարձութեան գիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամ:

1—3

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԷՆԵԼԻՎԱԿԻ Պիատիգորսկ քաղաք գնալու պատճառով, այս մայիսի 15-ից այլ ևս հիւանդներին չէ ընդունում: Գոյովինսկի պրոսպեկտ, Բէլոյ նախկին տուն, № 5:

1—2

Օրերդ Ս. Վ. ԱՐԼՈՒԹԵԱՆԻ ԳԻՇԵՐՈԹԻԿ ԴՊՐՈՑԸ ամառը տեղափոխվելու է մօտիկ ամառանոցներից մէկը: Ընդունվում են գիշերօթիկներ: Հասցէ՝ Ֆրէյ-լինսկայա փողոց, № 8:

2—4 (Ե.)

ԱՌԱՋԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

ԻՍԿԱԿԱՆ

Ա Ն Տ Ա Ռ Ա Յ Ի Ն Ջ Ր Ի

Սենեակների օդը թարմացնելու համար, ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, տեղեկացնում է բազմաթիւ նմանողութիւնների և կեղծութիւնների մասին և խնդրում է յարգելի հասարակութեանը ուշադրութիւն դարձնել, որպէս զի ԱՆՏԱՌԱՔԻՆ ՋՐԻ Իւրաքանչիւր սրուակը կրէր «Варшавская химическая лаборатория» ֆերմայի նշանակը: Իսկական «Անտառային Ջրի» գինն է. 40 կօպ, 1 ր., և 1 ր. 50 կօպ. սրուակը:

Ստանալ կարելի է ԹԻՖԼԻՍԻՄ. Գեղատան ապրանքների կովկասեան ընկ. մէջ, Բրոքսկու, Մարտիրոսովի, Գեօրգիանիի և Չարախչիանովի մօտ:

3—4 (ամիս 15-ին)

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԶԻՍԱՆ ԳՆՈՎ:

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՌՈՐ ՋԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

Գործարան Գ. Ա. ՏԵՐ-ԱՍՏՈՐԻՍԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԵՐԱ Կոչված թաղում:

50—50

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդում մայիս ամսին 25-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ԱՃՈՒՐԴ (առանց կրկնաճրդի) կապալով տալու Աւետիք ֆիրմայից, դպրոցին ընծայած կալուածքը, որը գտնվում է Սոլդատսկի փողոցում № 6 և 11: Պայմանաթուղթը կարելի է կարգաւ հոգաբարձութեան գիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10—12 ժամ:

3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵՒ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, մայիսի 26-ին, ԳԱԼԼԻԱ (LA GAULE) շողենաւը, նաւապետ ՍԵՐԵՆՈՆ (SERENON) զուրկ կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օդեսա, Սամսոն, Կ. Պոլսի և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում Լէմոնդուր տան, Նաբերէճիայա, և Թիֆլիսում նախկին Արժուէրի գալլերիում, № 103.

2—4

ԺԵՐԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ՊԱՀԵՍՈՒՄ

(Գօրցոյւլայա փողոց, նախկին Արժուէրու գալլերէա), ստացված է ԳԱՌԱՆ սպիտակեղէնի համար, սալմանի քաղան՝ 1 1/2, 2, 2 1/2 և 3 արշին լայնութեամբ: ՍԵՐԱՆԻ սպիտակեղէն, որ է՝ պարապալք 6, 12, 18, և 24 մարդու համար, ԱՆՁԵՌՈՑԻԿՆԵՐ, ԵՐԵՍՍՐԻՉԵՆԵՐ և ՍՓՈՑՆԵՐ՝ սպիտակ և գունաւոր:

ԱՄԱՌԱՑԻՆ ԿՏՈՐՆԵՐ՝ կանանց շորերի համար. մոխրադոյն և սպիտակ ԲԱԳՈՅՆԵՐ և ՊԱՐՈՒՄԻՆ կիտնների համար, կանանց և տղամարդկանց ամեն տեսակի գուլպաներ: ԿԱՀԱՐԱՍԻԻ ԿՏՈՐՆԵՐ և ՎԱՐԱԳՈՑՆԵՐ: (Tulle Nottingham).

5—5

ԳՕՆԵՐԻ ԵՒ ԼԷՑՑ

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱԲԲԱՑՈՒԹԻՒՆՑ

Այդ էլիկսիրը հնարել է 1373 թւին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՈ:

Այդ էլիկսիրը մի քանի կաթիլների ամենօրեայ գործածութիւնը պահպանում է առաջները փչանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդերը և թարմացնում է բերանը:

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են դարձեալ ԱՍՄՆԱՓՈՇԻ և ՊԱՍՏԱ ստամոքի սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել ամեն փոքր շատ նշանաւոր դեղատներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆումերական մագազիններում:



ԳԼԻՍՏՈՐ ԱԴԷՆՑ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.

13—30 (Ե.)